## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար երկու կետերի միջև ուղիղ կապուղու ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հունվարի 30-ին կնքված N «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/2-1» պայմանագրում 2019 թվականի հունվարի 31-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝Ֆինանսական պարտավորությունների ստանձնում:

Փոփոխության նկարագրություն՝ Հաստատվել է պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց վճարման ժամանակացույցը:

Փոփոխության հիմնավորում՝ «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/2-1» ծածկագրով պայմանագրի 7.5 և 7.15 կետերը, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017թ.-ի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 18-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով, որ ծառայությունների մատուցումն իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները առկա են:

Պատվիրատու՝ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
**2019թ. հունվարի 30-ին կնքված N ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/2-1 ծածկագրով ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի**

**ք. Երևան** **«31» «հունվար» 2019թ.**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արմեն Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Ֆարամազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 30.01.2019թ. կնքված N ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/2-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 18-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով, որ ծառայությունների մատուցումն իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները առկա են, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան

1.1 Հաստատել Պայմանագրի 2019 թվականի ընթացքում մատուցված ծառայությունների դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի (կցվում է):

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը (ներառյալ հավելվածը) կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերենով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ
Հ\Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449
Գործադիր տնօրեն՝

Digitally signed by ABRAHAMYAN ARMEN 3409660194
Date: 2019.02.01 16:06:37 GMT+04:00

------------------------ Ա.Աբրահամյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
Հասցե՝ Կոտայքի մարզ, ք.Աբովյան 2201, Խաղաղության 1
Բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ,
Հ\Հ 1930011980040100
ՀՎՀՀ 00096001
Գլխավոր տնօրեն՝

Digitally signed by FARAMAZYAN HAYK 3303790167
Date: 2019.02.01 13:58:52 AMT

------------------------ Հ. Ֆարամազյան
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 1*
*« 31» հունվար 2019թ. կնքված*
*N 1 Համաձայնագրի*

*Հավելված N 2*
*« 30 »  հունվարի  2019թ. կնքված*
*N «ՆՄԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-19/2-1» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 72411100/506 | Երկու կետերի միջև ուղիղ կապուղու ծառայություն | -- | -- | **185454.55** | **370 909.1** | **556363.65** | **741818.2** | **927272.75** | **1112727.3** | **1298181.85** | **1483636.4** | **1669090.95** | **2040000** | **2040000** |

*Վճարման ենթակա գումարները նշված են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68
Բանկը՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Ջեյթուն մ/ճ
Հ\Հ 163518012543
ՀՎՀՀ 02602449
Գործադիր տնօրեն՝

Digitally signed by ABRAHAMYAN ARMEN 3409660194
Date: 2019.02.01 16:05:17 GMT+04:00

----------------------- Ա.Աբրահամյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
Հասցե՝ Կոտայքի մարզ, ք.Աբովյան 2201, Խաղաղության 1
Բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ,
Հ\Հ 1930011980040100
ՀՎՀՀ 00096001
Գլխավոր տնօրեն՝

Digitally signed by FARAMAZYAN HAYK 3303790167
Date: 2019.02.01 13:59:32 AMT

----------------------- Հ. Ֆարամազյան
(ստորագրություն)

Կ.Տ.